

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2006թ. նոյեմբերի 1-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ցուցանիշների ցուցակը և տվյալների բազայի կառուցվածքը DevInfo-ի փորձնական փուլի համար» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2006թ. նոյեմբերի 13-17-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Գրիգորյանը և ՀՀ ԱՎԾ Երևան քաղաքի գործակալության աշխատանքի և սոցիալական հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ն. Լազգյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ժողովրդագրության հիմունքներ» թեմայով դասընթացին,
- ✓ 2006թ. նոյեմբերի 24-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագրի նախապատրաստում» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2006թ. նոյեմբերի 28-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Տարածաշրջանային տվյալների հավաքագրման նախաձեռնություն» ծրագրի շրջանակում կլոր սեղանի քննարկումներին,
- ✓ 2006թ. նոյեմբերի 30-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի համատեղ տարեկան վերանայման հանդիպմանը,
- ✓ 2006թ. դեկտեմբերի 4-6-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գաբրիելյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ընտանեկան բռնության թեմային նվիրված երկրորդ միջազգային կոնֆերանսին,
- ✓ 2006թ. դեկտեմբերի 21-22-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «Կենսաթոշակային համակարգի բարեփոխումներ» խորագրով մասնագիտական քննարկմանը: